



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Յետազոտության թեման՝ **ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ
ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ
ԿԱՐՈՂՈՒՄԿՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Յետազոտող ուսուցիչ՝ Լիլիթ Կամոյի Հարությունյան

Մեծամորի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ Գևորգյան Մարգուշա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ	
1.1 Նախագծային ուսուցման հիմնական դրույթները.....	5
1.2 Նախագծային ուսուցման կիրառումը գործնականում.....	9
1.3 Սովորողների նախաձեռնողական և սովորել սովորելու կարողունակության զարգացումը նախագծային աշխատանքի ընթացքում.....	12
Եզրակացություններ.....	15
Առաջարկություններ.....	17
Օգտագործված գրականության ցանկ.....	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպես հայտնի է, հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է: Այսինքն՝ նրանց համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Արդի կրթական բարեփոխումները էլ ավելի բարձր պահանջներ են առաջադրում սովորողների մտավոր, հոգևոր և կյանքի համար անհրաժեշտ կարողությունների և հմտությունների տիրապետման նկատմամբ: Այս բարեփոխումները և դրանցից բխող պահանջները մեծապես պայմանավորված են նաև սովորողների նախաձեռնողական և սովորել սովորելու կարողունակության խթանմամբ, ինչը անգնահատելի դեր ունի սովորողների անձի ձևավորման, զարգացման ապահովման, մտավոր առաջընթացի, բարոյահոգեբանական որակների դաստիարակման և արժեքային համակարգի ձևավորման գործում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր երկրում ամենօրյա ռեժիմով արդիականացվում է կրթական համակարգը՝ հարկ ենք համարում նշել, որ այդ արդիականացման ճանապարհին մեծապես կարևոր են նաև մանկավարժամեթոդական հնարների, դասի զանազան տիպերի ու ձևերի կիրառումը դպրոցում:

Այսօրեական տեղեկատվական տեխնոլոգիաների հարուստ ու բազմազան իրականության մեջ կրթական համակարգի արդիականացումը ուղիղ համեմատական է նոր սերնդի պահանջմունքներին, քանզի ավանդական ուսուցչակենտրոն դասն այլևս դժվարանում է բավարարել սովորողների հիմնական մասի կրթական պահանջմունքները: Սովորողներն ավելի նախաձեռնող են դարձել գիտելիք ստանալու, այդ գիտելիքը կիրառելու առումով, ինչը մեծապես պայմանավորված է տեղեկատվական հոսքերի հասանելիությամբ:

Նախագծային ուսուցման ներդրումը ՀՀ կրթական համակարգում կարևոր ու առանցքային քայլ է, որը սովորողների ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը խթանելու արդյունավետ գործիք կարող է դառնալ ուսուցչի համար:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի փուլում նախագծային ուսուցման մեթոդի ներդրմամբ, որը նպատակ ունի խրախուսել սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը,

սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու կարողությունը, այլ խոսքով՝ մեթոդի ներդրումը կարող է մեծապես բարձրացնել կրթության որակն ու խթանել սովորողների՝ կրթության ու գիտելիքի հանդեպ հետաքրքրությունը:

Չետագոտության նպատակը: Ձևավորել ուսուցիչների մշակելու, համակարգելու, որպես փորձագետ և խորհրդատու հանդես գալու դերը, ինչպես նաև զարգացնել սովորողի հետ թիմում աշխատելու հմտությունը նախագծային ուսուցման մեթոդի շրջանակներում:

Չետագոտության խնդիրը: Չետագոտության խնդիրն է սահմանել նախագծային ուսուցման մեթոդի դերն ու նշանակությունը՝ որպես կրթական համակարգի արդիականացման բաղադրիչ՝ պայմանավորված կրթության նոր չափորոշի պահանջներով:

ԳԼՈՒԽ 1 ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՐՈՂՈՒՄԻ ԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 Նախագծային ուսուցման հիմնական դրույթները

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են մարդուց նոր մտածելակերպ. ընկալում, համագործակցային կարողություններ, նոր կոմպետենցիաներ, նոր դերեր, հմտություններ: Այս պայմաններում կարևոր է, որ հանրակրթական ուսումնական հաստատությունը, որտեղ կայանում է անձի կրթական ու դաստիարակչական առանցքային գործընթացը, քայլի ժամանակի մարտահրավերներին համընթաց՝ բավարարելով կրթական համակարգի արդիականացման առաջնային բաղադրիչները՝ պայմանավորված միջազգային կրթական համակարգերի օրինակելի փորձով: Այս համատեքստում կարևոր բաղադրիչ է նաև բուն դասի ընթացքում նորարարական բաղադրիչների, ուսումնամանկավարժական մեթոդների, հնարների ներդրումը, որոնց թվին է պատկանում նախագծային ուսուցումը:

Ընդհանուր առմամբ նախագծային ուսուցումը կարելի է դիտարկել որպես դիդակտիկ համակարգ, իսկ նախագծային մեթոդը՝ որպես այդ համակարգի բաղադրիչ, որպես մանկավարժական տեխնոլոգիա, որը ներառում է ոչ միայն գիտելիքների ինտեգրումը, այլև գիտելիքների կիրառումը, նորերի ձեռքբերումը:

Նախագծային մեթոդը հետազոտական, ստեղծագործական մեթոդների համադրություն է, որի կենտրոնում սովորողն է: Այստեղ ուսուցչի մասնակցությունը սահմանափակվում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դերով: Այստեղից կարելի է եզրահանգել, որ նախագծային մեթոդի հիմնական նպատակը սովորել սովորեցնել սովորողին՝ ամեն կերպ խթանելով վերջինիս ինքնուրույն գործելու, պրպտելու, գտնելու, գիտելիքը գործնականում կիրառելու, սեփական կարծիքն ու դիրքորոշումն առանց այլ ազդակների ներգործության հայտնելու կարողության ձևավորումն ու զարգացումն է: Որպես նախագծային մեթոդի վերջնարդյունք կարելի է համարել սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Նախագծային մեթոդի հիմքում ընկած են ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջ.Դյուլիի կողմից առաջ քաշած մանկավարժական հասկացությունները, ով դրանք գործնականում կիրառել է Չիկագոյի

փորձարարական լաբորատոր դպրոցում 1896 – 1904 թվականներին: Ջ. Դյուլին կարծում էր, որ դպրոցի բոլոր գործողությունները պետք է ուղղված լինեն սովորողի մտածողության ձևավորմանը, որը հիմնված է անձնական փորձառության վրա: Ըստ Դյուլիի՝ մեթոդը տալիս էր այնպիսի պայմաններ, որոնք հարմարեցված էին անհատական կարիքներին և կարողություններին, ինչպես նաև կարող էր ապահովել դիտարկման, ներկայացման, հետազոտության, գաղափարների մշտական զարգացման համար համապատասխան պայմաններ¹:

Մեկ այլ հետազոտողների փոքր խումբ էլ՝ Մ.Ս. Շատսկիի գլխավորությամբ աշխատել է նախագծային մեթոդը ուսուցման պրակտիկայում ներդնելու խնդրի շուրջ 1905 թ. սկզբին: Այս աշխատանքի համար հաջողելու նախապայման էր սահմանված սովորողների անձնական հետաքրքրությունը: Ուսումնասիրման օբյեկտը պետք է վերցված լիներ իրական կյանքից և ծանոթ ու նշանակալից այն հետազոտողի համար: Հետազոտական աշխատանքը սովորողն իրականացնելու էր թե՛ նախկինում ձեռք բերված գիտելիքների, թե՛ այն գիտելիքների հիման վրա, որոնք ակնկալվում էին ձեռք բերել աշխատանքի ընթացքում: Ուսուցիչը-խորհրդատուն պետք է ուղղորդեր սովորողին՝ ցույց տալով աշխատանքի հիմնական նպատակն ու տեղեկատվության հնարավոր աղբյուրները²:

Իսկ ահա 1918թ.-ին մեթոդն ավելի հանրաճանաչ դարձավ ի շնորհիվ ամերիկացի ուսուցիչ Ուիլյա Յեթոյ Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» հայտնի հոդվածի հրատարակման:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ, ավելին՝ մեթոդի արդյունավետությունն ու կառուցվածքը բավականաչափ ուսումնասիրված է: Խորհրդային դպրոցները նախագծային մեթոդը ներմուծեցին ուսումնական պրակտիկայում առանց լրացուցիչ մշակման: Աշխատանքի ընթացքում առաջացան խնդիրներ՝ վերապատրաստված ուսուցիչների անբավարար քանակ, մասնագիտացված գրականության պակաս, ինչը դժվարացրեց նախագծային մեթոդի կիրառումը դպրոցական պրակտիկայում: Միաժամանակ կրթական միջավայրը միավորված չէր նախագծային ուսուցման ընդունման հարցում: Ն.Կ. Կրուպսկայան գրել է. «Նախագծային մեթոդը, որը հիմնված է սեփական աշխատանքը պլանավորելու անհրաժեշտությամբ, բացասական էր այնքանով, որ ուսումնական պլանները հիմնականում հեռացված էին բուն ուսումնասիրությունից և խանգարում էին համակարգված ու

¹ Ю. Г. Шихваргер, «Метод проектов в профессиональном обучении педагогов», Новосибирск 2013, стр.8

² <https://www.labyrinth.ru/books/440728/> М. Романовская «Метод проектов в учебном процессе», стр. 4.

կանոնակարգված ուսումնառությանը՝ սերմանելով սովորողների մեջ այն գաղափարը, թե ավանդական ուսումնառության գործընթացը կարևոր չէ»³:

Այդուհանդերձ վերջին տասնամյակներում նախագծային մեթոդի ներդրումը մի շարք առաջավոր երկրների կրթական համակարգերում, գալիս է փաստելու, որ նախագծային ուսուցման գերխնդիրն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման ընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ:

Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժության մեջ անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց հավաքագրում և կիրառելու պատրաստակամություն: Նախագծային մեթոդը ստեղծում է նպաստավոր պայմաններ հետևյալ կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման համար.

- Ռեֆլեկտիվ հմտություններ;
- Որոնողական, հետազոտական հմտություններ;
- Համագործակցային հմտություններ;
- Կառավարման կարողություններ, հմտություններ;
- Շնորհանդեսների պատրաստման հմտություններ;
- Ներկայացման հմտություններ:

Նախագծային ուսուցման մեթոդը ուսումնաճանաչողական և համատեղ աշխատանքի կազմակերպման ձև է, որում ներգրավված են դասավանդողներն ու ուսումնառուները: Ուսումնական նախագծերը նպաստավոր պայմաններ են ստեղծում սեփական հնարավորությունները ճանաչելու և զարգացնելու համար: Նախագծային մեթոդն ադապտիվ է. կարող է հարմարեցվել տարբեր միջավայրերի և նպատակների: Այն կարելի է կիրառել նաև արտադասարանային եղանակով, որտեղ սովորողը, որպես կանոն, էլ ավելի ազատ ու անկաշկանդ է:

Ակնհայտ է ուսումնական մեթոդի և քաղաքացիական ակտիվության կապը. այն առավելապես երևում է այն նախագծերում, որոնց մասնակիցները փորձում են անդրադառնալ համայնքային հիմնախնդիրներին: Ուսումնառուները տեղեկանում են, թե որտեղից են ծագում համայնքային տարատեսակ խնդիրները և պատասխանատվություն են ձեռք բերում իրենց համայնքի հանդեպ: Կոտրվում է

³ Е.А. Пеньковских, «Метод проектов в отечественной и зарубежной педагогической теории и практике», 2009, стр. 312.

շրջապատի հանդեպ անտարբերությունը, և տեղը գալիս է համայնքի հանդեպ սեփականության զգացումը:

Ուսուցչի դերը նախագծային ուսուցման գործընթացում անչափ կարևոր է. սովորողներն իրենց ուսուցչին դերային մոդել են համարում: Փոփոխվող աշխարհի և ինֆորմացիոն մեծ հոսքի պայմաններում դա մեծ մարտահրավեր է ժամանակակից ուսուցչի համար, որից լուրջ պատրաստվածություն և աշխատանքի կարևորության գիտակցություն է պահաջվում: Նախագծային ուսուցման միջոցով ստացած ամեն գիտելիք կամ հմտություն լիովին համապատասխանում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կրթության չորս գերակայությունների տրամաբանությանը՝ սովորել իմանալու համար, սովորել կիրառելու համար, սովորել լինելու համար, սովորել միասին ապրելու համար⁴:

ՀՀ կրթական նոր չափորոշչի պահանջներից մեկը աշակերտական նախագծերն են: Այս տարի չափորոշիչը փորձարկվեց ՀՀ Տավուշի մարզում, սակայն հայտնի է, որ շուտով այն պետք է կիրառվի ամբողջ Հայաստանում, և բոլոր ուսուցիչները պիտի նախագծեր իրականացնեն դպրոցներում: Դրանք սովորողներին ուսումնառության մեջ ներգրավելու և նրանց հետաքրքրությունը խթանելու շատ արդյունավետ միջոց են և օգնում են ձևավորել չափազանց կարևոր գործնական կարողություններ և հմտություններ:

⁴ <http://boon.am/learning/> Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շագաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին)

1.2 Նախագծային ուսուցման կիրառումը գործնականում

Նախագծային ուսուցման կիրառությունը սովորողին հնարավորություն է տալիս համատեղելի դարձնել սեփական հետաքրքրությունները, երազանքները ուսումնառության գործընթացի հետ: Այս համատեքստում մեթոդի կիրառումը առանձնակի ուշադրության է արժանի հատկապես միջին և ավագ դպրոցներում՝ հաշվի առնելով սովորողների սեռատարիքային առանձնահատկությունները: Այս տարիքային խմբի սովորողների մոտ հաճախ հանդիպում է անկանոն վարք, սովորելու նկատմամբ անտարբերություն, հետաքրքրության բացակայություն: Հենց նմանօրինակ խնդիրներով էլ պայմանավորված է կրթական համակարգում առկա բացթողումները, որոնք, անշուշտ, պահանջում են շուտափույթ լուծումներ: Կարծում ենք, որ լուծումներից մեկն էլ հենց նախագծային մեթոդի ներդրումն է ՀՀ կրթական համակարգում:

Այնուամենայնիվ, սովորողի հետաքրքրությունը մեծացնելու, դասի մեջ լիարժեք ներգրավելու հարցում առանցքային դերակատարում ունի ուսուցիչը, ով պետք է շատ նրբորեն մոտենա սովորողների՝ հաշվի առնելով սեռատարիքային դրսևորումներով պայմանավորված առանձնահատկությունները:

Ավագ դեռահասության տարիքի սովորողների հետ կիրառվող հոգեախտորոշիչ մեթոդները պետք է հետաքրքրությունն առաջացնեն, ինքնուրույնության ու ոչ բովանդակային փոփոխություններ մտցնելու, ոչ ստանդարտ պատասխաններ տալու, սեփական անձը դրսևորելու, գիտելիքներն ու կարողությունները ցուցադրելու հնարավորություն տան դեռահասին:

Դեռահասներին բնորոշ հետաքրքրությունն ինքնաճանաչողության հանդեպ բարենպաստ պայմաններ է ստեղծում հոգեախտորոշիչ մեթոդիկաների կիրառման համար, հատկապես եթե դրանք հետաքրքիր և օգտակար տեղեկություններ են տրամադրում դեռահասին սեփական անձի մասին, օգնում են նրան ավելի լավ ճանաչելու իրեն ու համեմատվելու մյուսների հետ⁵: Նախագծային ուսուցումը սովորողի առաջ բացում է սեփական ուժերը չափելու, անձանոթ իրավիճակներում արագ կողմնորոշվելու, առկա գիտելիքների ներդրմամբ լուծումներ գտնելու լայն հնարավորություններ:

Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել համացանցում՝ գտնվելով տարբեր

⁵ Հոգեբանությունը և կյանքը, Երևան 2021, էջ 13:

տարածաշրջաններում: Ընդ որում՝ ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը: Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը:

Նախագծային ուսուցման ներկայացվող պահանջներն են.

- թեմա և ուսումնասիրման ենթակա թեմայի հետ կապված հարցադրումներ;
- աշխատանքի իրականացման հստակ փուլեր՝ նախնական պլանավորում, գործողությունների ծրագիր, ժամկետներ, միջանկյալ հաշվետվություններ;
- աշխատանքի վերջնաժամկետ
- ակնկալվող արդյունք՝ հրապարակախոսություն, տեսաֆիլմ, ձեռնարկ, փաթեթ, շտեմարան, հոդված, ներկայացում, և այլն:

Նախագիծն իրականացման ընթացքում սովորողների հետազոտական աշխատանքին ներկայացվող պահանջներն են.

- Տեքստային բաղադրիչի վերլուծում, բովանդակության քննարկում, եզրակացության ձևակերպում;
- դիրքորոշման հիմնավորում, ստեղծագործական մտածողության առկայություն;
- անհրաժեշտ տեղեկատվական հոսքերի կառավարում մասնագիտական բառարանների, գիտահանրամատչելի, հանրագիտարանային գրականության, Վիքիդարանի և հանրագիտարանային հայալեզու, ինչպես նաև օտարալեզու կայքերի գործածում, զանազան համացանցային գործիքների կիրառում;
- կարդացած տեքստերի համադրում, դրանց տարբերությունների քննարկում, եզրակացություն-հետևություն անելու կարողության ձևավորում:

Նախագիծի մեկնարկի համար խիստ կարևոր է, որ սովորողներն ունենան նախնական մոտիվացիա: Ուսուցիչը պետք է սովորողին հնարավորություն տա գործել, նախագիծը մշակել ու պլանավորել ինքնուրույն: Հարկ է կարևորել յուրաքանչյուր սովորողի սուբյեկտիվ կարծիքը, քննարկել, եզրահանգումներ անել: Սովորողի կարծիքը հաշվի առնելը սկզբունք է, որն անպայման հարկավոր է հաշվի առնել:

Ինչպես արդեն նշել էինք, այստեղ առանցքային դերակատարում ունի նաև ուսուցիչը, ով ապահովում է մասնագիտական խորհրդատավություն սովորողին, օգնում է որոնել տեղեկատվական գրականություն, այլ նյութեր, մեդիանյութեր, օգնում է կոնկրետ հարցեր լուծելիս առաջացած դժվարությունները հաղթահարել, ինչպես նաև փոխանցում է համապատասխան հմտություններ:

Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ թիմային աշխատանքի ժամանակ սովորողներն էլ ավելի են մտերմանում, փորձում են օգտակար լինել միմյանց, սովորում ու սովորեցնում են իրար: Վերջիններիս մոտ ամրակայվում է կոլեկտիվ աշխատանքի գաղափարը, մեկտեղ աշխատելու, սովորելու, ուսումնասիրելու ու հետազոտելու ընթացքում սովորողների մոտ բարձրանում է պատասխանատվության զգացումը, սեփական ներդրումն ունենալու ձգտումը:

Այսպիսով, աշակերտները կատարում են հետազոտություններ, վերլուծում տեղեկությունները, աշխատում նախագծի վրա, փորձեր են անում, պատրաստվում նախագծի պաշտպանությանը: Պաշտպանությունը աշխատանքի վերջնական արդյունքն է, որը կարող է լինել ցանկացած բնույթի՝ կախված սովորողի ստեղծագործ մոտեցումից: Ուսուցիչը լսում է, աշակերտներին հարցեր ուղղում, անհրաժեշտության դեպքում ուղղորդում է, գնահատում նրանց կատարած աշխատանքի որակը և պրոբլեմի լուծման ինքնատիպությունը: Աշակերտները ներկայացնում են ուսումնական նախագիծը, մասնակցում խմբային վերլուծությանը, արդյունքների գնահատմանը:

Նախագծային մեթոդով աշխատանքը բավականին կանոնակարգված ու համակարգված աշխատանք է, որտեղ սովորողն ու ուսուցիչն ունեն իրենց դերերը, ընդ որում՝ շատ հաճախ այդ դերաբաշխումն աշխատանքի ընթացքում կարող է փոփոխվել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ սովորողը հաճախ հանդես է գալիս սովորեցնողի դերում: Այդպես է լինում հատկապես օժտված սովորողների պարագայում, երբ վերջինս, ունենալով տեղեկատվության մեծ պաշար, այն փոխանցում է իր ընկերներին:

1.3 Սովորողների նախաձեռնողականության և սովորել սովորելու կարողունակության զարգացումը նախագծային աշխատանքի ընթացքում

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են: Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Հիմք ընդունելով 2022 թվականի սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտած հանրակրթության պետական նոր չափորոշիչը՝ սահմանելք միջնակարգ կրթության շրջանավարտի ակնկալվող կարողունակություններից սովորել սովորելու կարողունակությունը, որը ենթադրում սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում: Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն⁶:

Օրենքից հղումը կրկին փաստում է, որ աշակերտակենտրոն ուսուցումը 21-րդ դարի սովորողի համար ուղղակի անհրաժեշտություն է: Այս հանգամանքը, ինչպես արդեն նշել էինք, պայմանավորված է մի շարք գործոններով: Նմանօրինակ գործոնները ուղիղ կերպով սահմանում են կրթական համակարգի նոր պահանջներ, որոնց առանցքում սովորողն է՝ որպես կրթական համակարգի առաջնային շահակից: Եթե ավանդական ուսուցումն ու դրա մեթոդները ինչ-որ առումով սահմանափակվում էին սովորողի մասնակցությունը բուն դասապրոցոսի այս կամ այն հատվածում, ապա ինտերակտիվ, աշակերտակենտրոն ուսուցումը սովորողին հնարավորություն է տալիս լինել դասապրոցեսի կիզակետում՝ բանավիճել,

⁶ ՀՀ Կառավարության որոշում

երկխոսել, հետազոտել, կիրառել, SRS գործիք, այլ խոսքով՝ դուրս գալ կադապարներից ու կարմիր գծերից՝ դասից քաղելով առավելագույն գիտելիք, հմտություն: Այս համատեքստում բնավ չենք ստվերում ուսուցչակենտրոն ուսուցումը, այդուհանդերձ, հարկ է արձանագրել, որ հետազոտող աշակերտն էլ ավելի մոտիվացված է ազատ դասի ժամանակ:

Իսկ ինչ է տալիս սովորողներին նախաձեռնողական և սովորել սովորելու կարողունակության զարգացումը, որը նա ձեռք է բերում հանրակրթական ուսումնական հաստատությունում: Առաջին հերթին սովորողը դառնում է ինքնավստահ, բարձրանում է վերջինիս ինքնագնահատականը, հետազոտությունների ժամանակ ձեռք է բերում մի շարք այլ կարողունակություններ ու հմտություններ, որոնք կիրառելի են կյանքում, բացի դա՝ սովորողը դուրս է գալիս տեսական գիտելիքի շրջանակից՝ հնարավորություն ունենալով գործնականում սեփական գիտելիքը կիրառելու ու ակնկալվող վերջնարդյունքը տեսնելու:

Սովորողների նախագծային գործունեությունը նրանց մտածողության զարգացման լավագույն միջոցներից մեկն է, որը համապատասխանում է կրթության արդի խնդիրներին և կարող է դառնալ կրթության բովանդակության բարեփոխումների հիմնական բաղադրիչներից մեկը թե՛ դպրոցում, թե՛ բուհում:

Այսպիսով, նախագծային ուսուցման հիմնական նպատակներն են՝

- նպաստել սովորողի ինքնագնահատականի բարձրացմանը՝ հնարավորություն ստեղծելով, որ յուրաքանչյուրն իրեն համարի ընդունակ;
- սովորողների մոտ ձևավորել համագործակցային և մյուսներին գնահատելու կարողություններ;
- զարգացնել սովորողի քննադատական մտածողությունը, նպաստել առաջադրված խնդիրը լուծելու ուղիների որոնման հմտության ձևավորմանը;
- զարգացնել սովորողների հետազոտական կարողությունները (բացահայտել հիմնախնդիրը, հավաքել անհրաժեշտ տեղեկություններ, դիտարկել գործընթացները, ընդհանրացնել և այլն) և վերլուծական մտածողությունը⁷:

Ի վերջո կրթության հարկն իմացող շրջանավարտը պետք է գիտակցի, որ այսօր աշխատաշուկայում մրցունակ լինելը կարևոր է, իսկ դա կապահովվի եթե ինքը տիրապետի որոշակի գիտելիքների, կարողությունների, հմտությունների և մասնագիտական կոմպետենցիաների, կարողանա իրականացնել տեղեկատվության վերլուծություն, գործնականում կիրառել տեսական գիտելիքները, ինքնակրթվի և

⁷ Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, 2021, «Մերի Հովհաննիսյան Նախագծային ուսուցման առանձնահատկությունները», էջ 181:

պատրաստ լինի համագործակցության: Նախագծային ուսուցումն այն կարևոր ազդակն է, որն ունակ է սովորողին տալ այն գիտակցումը, որ ինքը կարող ուժ է, իսկ գիտելիքն այդ ուժի տարբեր դրսևորումների արտահայտումն է, որն էլ իր հերթին բարեկեցիկ ապագայի հենասյունն է, ուստի թե՛ մակավարժը, թե՛ սովորողը պետք է փորձեն անդադար ինքնազարգանալ, կրթությունը դիտարկեն ոչ թե պարտականություն կամ անհրաժեշտություն, այլ ուղի, որի վերջնարդյունքը սոցիալական միջավայրում արժանի տեղ ու դիրք ունեցող քաղաքացին է: Փաստորեն, այս գիտակցումը կարող է լուծել կրթական մի շարք հարցեր, այդ թվում՝ բարձրացնել կրթության որակը: Նախագծային աշխատանքը թույլ է տալիս յուրաքանչյուր սովորողի գիտելիքներն ու կարողությունները գնահատել համալիր կերպով: Նախագծային աշխատանքի ստեղծագործական հաշվետվությունը կարելի է համարել ամփոփիչ որակավորում (քննություն): Այդ դեպքում դասավանդողը յուրաքանչյուր աշխատանքի համար գրախոսություն պետք է պատրաստի: Ներկայացումից հետո խիստ կարևոր է սովորողների հետ քննարկել արդյունքները, նշել դրականը, քննարկել թերություններն ու նշել նախագծային աշխատանքների բարելավելու կապակցությամբ սովորողների առաջարկները (ռեֆլեքսիայի սկզբունք⁸):

Հենց այստեղ է, որ էականորեն զարգացում են ապրում սովորողների նախաձեռնողականության և սովորել սովորելու կարողունակությունները:

⁸ В.С. Лазарев, «Новое понимание метода проектов в образовании // Проблемы современного образования», 2011 стр.35-43.

ԵՉՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Համակողմանի ուսումնասիրության ենթարկելով ուսուցման նախագծային մեթոդը, դրա անցած պատմությունը, հիմնական գործառույթները, տեսակներն ու մեթոդից ակնկալվող վերջնարդյունքը՝ կարող ենք կատարել հետևյալ արձանագրումները.

- Նախագծային մեթոդի ներդրումը ՀՀ դպրոցներում Էականորեն կնպաստի կրթության որակի բարձրացմանը՝ պայմանավորված մեթոդի աշակերտակենտրոն լինելու հանգամանքով;
- ՏՀՏ-ի զարգացումների ֆոնին նախագծային մեթոդի ներդրումը ուղղակի անհրաժեշտություն է, քանի որ թույլ կտա կառավարել սովորողների մոտ առկա տեղեկատվական հոսքերը՝ ի նպաստ կրթության որակի բարձրացման;
- Ինքնուրույնության, նախաձեռնողականության բարձրացման ֆոնին դպրոցական ծրագրով նախատեսված ուսումնական առարկաները սովորողների համար կդառնան մատչելի, կիրառելի ու հետաքրքիր;
- Ուսուցիչների վերապատրաստումների շնորհիվ նախագծային ուսուցումը կդառնա առաջնահերթություն՝ բացառելով մեթոդի ներդրմամբ պայմանավորված հնարավոր կադրային քաղցը;
- Նախագծային ուսուցումը, նախագծային մեթոդի համընդհանուր կիրառությունը թույլ կտա սովորողին վերարժևորել սեփական գիտելիքը, ձգտել ավելի, կարևորել ինքնակրթությունը;
- Նախագծային մեթոդի ներդրումը կօգնի սովորողներին տեսական ու գործնական բաղադրիչները արդյունավետ համակարգել, խթանել որոշակի խնդիրների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը, ինչը ենթադրում է համալիր գիտելիքների տիրապետում;
- Նախագծային մեթոդի ներդրումը կօգնի սովորողի համար կանխատեսելի դարձնել առաջարկվող խնդրի լուծումը նախագծային գործունեությամբ;
- Նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների համար հասանելի դարձնել զանազան տեղեկատվական աղբյուրներից օգտվելու գործընթացները;

- Նախագծային մեթոդի ներդրումը կնպաստի սովորողների ստեղծագործական ներուժի ակտիվացմանը, կարողությունների բացահայտմանը, յուրաքանչյուր սովորողի կրթության անհատական ուղու ստեղծմանը:

Կարծում ենք՝ նախագծային մեթոդի կիրառությունը կկարողանանք օգնել սովորողին հանդես գալ որպես նորարար, նախաձեռնող ու ստեղծագործ, համագործակցման միջոցով ուսուցման գործընթացը ավելի արդյունավետ դարձնել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չիմք ընդունելով հետազոտության ընթացքում կատարած արձանագրումները՝ բերենք մի քանի առաջարկություններ.

- ✓ Նախագծային ուսուցումը, հանդիսանալով կրթական համակարգի բաղկացուցիչ մաս, ՀՀ դպրոցներում արդյունավետ ներդնելու համար կարիք ունի լրջագույն մասնագիտական ուսումնասիրությունների, ուստի առաջարկում ենք խորացնել թեմայի շուրջ քննարկումները հատկապես սկսնակ մանկավարժների շրջանում, ովքեր, որպես կանոն, աչքի են ընկնում իրենց ն սորարարարական գաղափարներով;
- ✓ Կառավարության մակարդակով ուսումնասիրել նախագծային ուսուցման ներդրման փորձը, այդ մշտադիտարկման արդյունքները հասանելի դարձնել ՀՀ ուսուցիչների համար;
- ✓ Չրատարակել ուսուցիչներին հասանելի մեթոդական գրականություն;
- ✓ Չանրային քննարկումներ իրականացնել ուսուցիչների շրջանում;
- ✓ Ուսուցիչների վերապատրաստումների ընթացքում կիրառել նախագծային ուսուցման մեթոդը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ю. Г. Шихваргер, «Метод проектов в профессиональном обучении педагогов», Новосибирск 2013
2. В.С. Лазарев, «Новое понимание метода проектов в образовании // Проблемы современного образования», 2011
3. <https://www.labyrinth.ru/books/440728/> М. Романовская «Метод проектов в учебном процессе»
4. Е.А. Пеньковских, «Метод проектов в отечественной и зарубежной педагогической теории и практике», 2009
5. boon.am/learning/ Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Շազաֆյան (Կրթություն ամենուր և բոլորին)
6. Հոգեբանությունը և կյանքը, Երևան 2021
7. <https://escs.am/am/search?q=%D5%B9%D5%A1%D6%83%D5%B8%D6%80%D5%B8%D5%B7%D5%AB%D5%B9> / Կառավարության որոշում/
8. Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, 2021, «Մերի Հովհաննիսյան Նախագծային ուսուցման առանձնահատկությունները»